

16 15

„ԵՐԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“
ԸՆԿԵՐՈՒՄԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻՆ № 27

2-412

344. ԱՂԱԲԱԲ

8

ՀՈՐԹԱՐԱԾ ≡

ᠮᠤᠨᠤᠯᠤᠰ

3959

१०५८५.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ծանոթացե՛ք «ՀԱՍԿԵՐ» տոմսագրին

0000(7)00.10

၆၆၁, ၆၇၂

Գլխավոր Գրախոս Ե. Աղանեանի, Պոլից. 7
1915

30 MAY 2011

* *
* *

Քուր ու ախպոր
սէրն անուշ,
ախպոր սիրած
ըստն անուշ...

Փողովրդական



6278
-5 FEB 2013



Ա.Ռ.Ա.ԶԻՆ ԽՕՍԲ

Հորթարած Մուսին
մահակը ուսին,
մի կտորը չոր հաց
մէջքովը կապած՝
գեղի հորթերը,
էն չար հորթերը,
ամեն առաւօտ
բշում էր արօտ:
Քշում էր տանում
մի ծաղկուտ անում,
ինքը թեք ընկնում
ու հանգստանում:
Իրիկնապահին,
էն չար հորթերին,
ետ էր դարձնում,
բշում դէպի տուն,

բերում էր գեղում
տէրէցտէր անում,
ինքը մի ծանօթ
հարեանի մօտ
պառկում էր քնում
մինչև առաւօտ:

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

1.

Մեր Մուսին որբ էր,—
անհէր ու անմէր.
մի կենտ քոյր ունէր,
իր նման անտէր:

Քոյրը եղբօրից
պատիկ էր տարով,
մանկութեան օրից
ջան ու ջիգեարով:

Մուսին էլ նրան
էնքան էր սիրում,
որ առանց նրան
հանգիստ չէր մնում:

Էսպէս երկուսով,
մէկմէկու յուսով,
խալխի զոներին,
խալխի տներին,

երբեմն սոված,
երբեմն ծարաւ,
մի կերպ մեծացան,
եօթ-ութ տարեկան
մանուկներ դարձան:

Երբ որ մեծացան,
տաս տարին անցան,
ամենը մի տեղ
մի գործի կպան:

Մի օր մի կին,
 մի օտար կին,
 խղճաց Մուսինի քոյրիկին,
 գեղիցն առաւ՝
 բաղաբ տարաւ,
 իր տանն արաւ աղախին:
 Նուշին գնաց,
 Մուսին մնաց,
 Մուսին մնաց մենմենակ,
 իր մինուճար
 քրոջ համար
 դարդ էր անում շարունակ:
 — Ա՛խ, Նուշի ջան,
 քեզ ո՛ւր տարան,
 քեզ ո՛ւր տարան մեր գեղից,
 էս ի՞նչու մեզ
 օտարի պէս
 բաժանեցին իրարից:
 Մենք որք օրով,
 քուր-ախպօրով
 պահպանեցինք մէկ-մէկու,
 պահպանեցինք,
 բօյ բաշեցինք,
 որ հեռանաս հիմի դո՛ւ:
 Ա՛խ, Նուշի ջան,
 Մուսին քեզ ջան,
 ի՞նչ ասեմ, որ իմանաս,
 թէ որ մէկ էլ
 գեղն ես եկել՝
 էլ չեմ թողնի ետ գնաս:—

էսպէս լալով,
 մըխկըտալով
 Մուսին մնաց դռնէ դուռ,
 հօրիցը զուրկ,
 մօրիցը զուրկ,
 չէր դիմանում առանց քուր:

Անցաւ ժամանակ...
 ու մի ժամանակ՝
 գիւղացիք Մուսին



հորթարած արին,
 և մանուկ Մուսին,
 մահակը ուսին,
 հորթարած դառաւ:

Հորթարած դառաւ,
 հորթերը տարաւ
 ամեն առաւօտ
 հանդերը արօտ:
 էն սիրուն, կանաչ
 դաշտերն ու մէրին
 մի քիչ մեր Մուսնի
 սիրտը ետ բերին.
 օր-օրի վըրա
 նըրա դարդերը
 ցիր ու ցան արին
 անդարդ հանդերը:
 էն հազարաւոր
 ծաղկունքը նախշուն
 Մուսնին ամեն օր
 կեանք էին բախշում,
 էն սարեակները,
 ծիծեռնակները,
 լորը, կաքաւը,
 ու մոշահաւը,
 մի խումբ էս ծառին,
 մի խումբ էն քարին,
 ոմանք էս խոտում,
 որն էն ծաղկուտում
 ճրկ-ճրկում էին,
 կըշ-կըշում էին
 էնպիսի ուրախ
 անվերջ երգ ու տաղ,
 որ Մուսին հանդում
 էլ ցաւ չէր ըզգում:

4.

Մուսին ունէր
 մի լաւ ընկեր՝
 իրան պէս որբ մնացած,
 էն պոչը կեռ
 Թոփլան շունն էր՝
 Մուսնի ձեռին մեծացած:
 Առաւօտ վաղ,
 Մուսնից զոչաղ,
 առաջն ընկած հորթերի՝
 Թռչկոտալի
 ցոյց էր տալի
 ճամփաները հանդերի:
 Ու հանդերում
 չէր համբերում,
 համ հորթերին էր նայում,
 համ էլ գնում
 ականջ դնում՝
 Մուսին ինչ է հրամայում

5.

Մէկ էլ տեսար
 Մուսին կասէր.—
 ձէն-ձուն կը տար,
 կը շըւացնէր—
 — Ֆո՛ւ ու ու...
 Ֆո՛ւ ու ու...
 Թոփլան, Թոփլան,
 վազի, վազի,
 մերոնց Ծիրան

հորթին հասի...

Դէ, շուտ, թուի,
ճամփէն կտրի,
միտքը ծուռն է
էն անտէրի:—

Շունը ձեռաց
գնում-գալի,
Ծիրան հորթին
ետ էր տալի:

— Ֆո՛ւ, ո՛ւ ու...

Ֆո՛ւ, ու ու...

Թոփլան, մի տես,
ո՛ւր է վազում
էն աներես
մողին էնպէս:

Շունը նորից
դուրս էր թռչում՝
մողուն ձորից
դաշտը բշում:

6.

Ճաշւայ շողին
կաղնու տակին
նստոտել են հորթերը,
նրանց կողքին,
զով շւաքին՝
Մուսին ու իր ընկերը,
Հորթերն անուշ
որոճում են
ականջները շարժելով,
շատն էլ թմրել

ու ննջում են
կամաց-կամաց շնչելով:
Մի քանիսն էլ
ոտքի կանգնել,
խառնել են իրար մէջ,
իրար քսում,
պինդ-պինդ լիզում
իրար ճակատ, կողք ու մէջք:
Շունն էլ պառկել
ու մեկնել է
յոգնած, բեզբաժ ոտքերը,
նինջը եկել
ու քնել է
էտ հորթերի մօտերը:

7

Էսպէս ժամանակ
Մուսին շարունակ
մէկ տաղ էր ասում
կաղնու շւաքում,
մէկ շրւի ածում,
բաղցր նւագում.—
— Դո՛ւ, հա՛ դո՛ւ,
զրի՛դո՛ւ, հա՛ դո՛ւ,
հազրի՛ դո՛ւ, հա՛ դո՛ւ,
դուզրի՛ դո՛ւ, հա՛ դո՛ւ...
Էս անուշ ձէնից
հորթերը քնից
վեր էին թռչում՝
ծոյլ-ծոյլ յօրանջում:
Իսկ զիմացն եղած

դաշտերն ու մէրին,
Մուսնի նւագած
բոլոր երգերին
ձէն էին պահում
ու սիրտը շահում:

8

Անցնում էր շողը,
երեկոն գալիս,
զովն ու շւաքը
իրար տեղ տալիս...

Ու մանուկ Մուսին,
մահակը ուսին,
հորթերը ջրից
քշում էր նորից
դէպի լիովի
դաշտը ծաղկալի:

Էսպէս ամեն օր՝
հորթերը բոլոր
արօտ էր բերում,
մինչև իրիկուն
լաւ արածեցնում,
իրիկնապահին
ետ էր դարձնում,
քշում դէպի տուն:

Քշում էր տանում,
տէրէցտէր անում,
ինքը մի ծանօթ
հարեանի մօտ
պառկում էր քնում
մինչև առաւօտ:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

1

Առաւօտ է...

Թարմ օդ է,—

կեանք է առել աշխարհը,—

կեանք է առել,

դրախտ դառել

սարն ու դաշտը, անտառը:

Էս առաւօտ

Մուսին դարդոտ

հանդն է տարել հորթերը,

հանդն է տարել,

կանաչն արել,

ինքը նստել մօտերը:

Արևը վառ

վերեից վար

ծիծաղում է սարերին,

կամաց-կամաց

իջնում է ցած,

շողշողալով քարերին:

Շողշողալով,

շողին տալով,

կեանք է տալի հանդերին,

կեանք է տալի,

որ հիւթալի

կանաչ խոտ տան հորթերին:

Առաւօտ է...

Մաքուր օդ է,
կեանք է առել աշխարհը,—
կեանք է առել,
դրախտ դառել,
սարն ու դաշտը, անտառը:

2.

Ծաղիկը շողոտ,
կանաչը ցօղոտ,
փռւած ամեն տեղ
մէկ-մէկուց շքեղ,
մէկ-մէկուց համեղ,
անուշ, հիւթալի,
փոքրիկ հորթերին
հանգիստ չեն տալի:
Սիրուն հորթերը՝
էն չար հորթերը՝
մէկ դէսն են վազում՝
էս ծաղկին հասնում,
մէկ դէսն են ցատկում
էն խոտը պոկում,
մէկ էլ՝ բառաչում,
մէկ-մէկու կանչում
և ուրախ-ուրախ
բռնում հորթախաղ:
Որը ինքնիրան
ծուլ-ծուլ է լինում
ու իրան-իրան
մի կողմը գնում,
որը բարկացած

առաջ է գալիս,
ընկերին յանկարծ
հարու է տալիս,
ոմանք էլ կանգնած
մէկ-մէկու դիմաց
դռնի են խփում՝
ուժերը փորձում...
էն մէկն էլ հրէն՝
կետ արած փախչում,
թողած իր ճամփէն
դարերն է թռչում:
Ու ամբողջ օրը՝
էսպէս բոլորը
մէկ խոտ են ուտում,
տասը թռչկոտում:

3.

Խեղճ Մուսին էս օր
տխուր է, տրտում,
ինչ որ անսովոր
մի դարդ կայ սրտում.—
ոչ էն հորթերի
խաղն է դուր գալի,
ոչ էլ հանդերի
կեանքը խնդալի:
Հորթի պէս կայտառ,
հորթի պէս անդարդ
էն Մուսին էս օր՝
ամպի պէս խաւար,
ամպի պէս մռայլ
նստած է մոլոր:

Նստած է մոլոր:



նայում է անվերջ
դիմաց ծմակին,
մէկ էլ՝ ձեռքի մէջ
եղած նամակին:

Ծմակից ինչ որ
սպասելիք ունի,
նամակից ինչ որ
ասելիք ունի:

Նայում է, նայում,
ինքնիրան ասում. —

— Սխալ, Պէտի, ռւր ես,
ռւր ես, մի ւրի,
ւրի, տղի պէս
խօսքդ կատարի:
Բաս էլ ընկերը
ո՞ր օրւայ կրլի,
բաս էտ գրքերը
ի՞նչ են դաս տալի:

Ասաւ խեղճ Մուսին
ու հոգոց քաշեց,
նայեց նամակին,
ծա՛նր հառաչեց:

4.

Տխուր էր Մուսին,

հարազատ Նուշին
իր միտն էր եկել,
մտքի ծովն ընկնել:

Քրոջ պատկերը,

նրա խօսքերը

համ մէկ-մէկ յիշում,

համ ա՛խ էր քաշում:

Նա ախ էր քաշում,

որ բուր ախպօրով
էնպէս որք օրով
անտէր մնացին:

Նա դարդ էր անում,

որ մի չոր պատառ
սև հացի համար
Նուշին հեռացրին:

Նա զարմանում էր.

չէ՞ որ ուրիշին
սովոր չէր Նուշին.
բաս ո՞նց է անում,
նա առանց իրեն
ո՞նց է դիմանում:

Ու էսպէս անվերջ

դարդ ու ցաւի մէջ
խեղճ մանուկ Մուսին
իր քրոջ մասին
էնքան մտածեց,
ախ ու վախ քաշեց,
որ մէկ էլ յանկարծ
դառը հեկեկաց,
ու հոնգուր-հոնգուր
արտասունք թափեց:

Թոփլանն իմացաւ
իր Մուսնի լացը,
վազելով հասաւ,
կանգնեց դիմացը,
աչքերը ձգեց
նըրա աչքերին
ու խորը նայեց

իրեն ընկերին:

Մի քիչ որ նայեց՝
ասես հասկացաւ,
որ Մուսին մի մեծ
դարդ ունի սրտում.
խսկոյն մօտեցաւ,
ձեռքերը լիզեց,
իր տխուր-տրտում
Մուսնին փայփայեց:

5.

էս միջոցին
յանկարծ Մուսին
վեր բարձրացրեց աչքերը,
մէկ էլ տեսաւ
հանդն է գալիս
իրեն Պետի ընկերը:
Տեսնելուն պէս
խեղճը էնպէս
ուրախացաւ, սիրտ առաւ,
ոնց որ գային,
իմաց տային
թէ՛ եկ Մուսի, բուրդ եկաւ:
— Բարև, այ Մուսի,
ի՞նչու ես տխուր:
Զէ՛ որ քեզ ասի
դարդ շանես իզուր,—
ասաւ մեր Պետին
ժպիտը դէմքին,
կռացաւ նստեց
ընկերով կողքին:

— Ասենք թէ շատ էլ
նամակ ես ստացել,
էլ դրա համար
ի՞նչ ես վշտացել:
Դու դեռ չիմացած
մէջն ի՞նչ կայ գրած՝
եկել ես նստել,
սև սուզը մտել:
— Պետի ջան, գիտեմ,
շատ լաւ ես ասում,
բայց ես ի՞նչ անեմ.
բւորս դարդից
էս քանի օր է
միտքս է մոլորէ:

Գիշերս երազում,
տես, ի՞նչ եմ տեսնում:
Նուշին վեր ընկած
մի խորը փոսում՝
մի ձէնը երկինք,
մի ձէնը գետինք,
համ լաց էր լինում,
արտասուէք թափում,
համ էլ աղաչում,
օգնութիւն կանչում:

Փոսի մօտ կանգնած
մի շար պառաւ կին՝
ծէրը երկաթած
մահակ կար ձեռքին.
ով որ ուզում էր
օգնութեան հասնի՝
մի լաւ դնքսում էր,
որ խօսք էլ չասի:

—էհ, բան չունես դու,
այ իմ գիժ Մուսի,
երազն ի՞նչ է, որ
մարդ նրան լսի:
Նամակդ հանի,
նամակը կարդանք,
դեռ բան չիմացած՝
իզուր վայ չըտանք:

6.

Կէս օրն անց էր:
Սրեն անցել՝
դէմ էր արել սարերին,
բամու ընկեր
հոփն էր ընկել
Թռչկոտում էր բարերին:
Անուշահոտ
ծաղիկ ու խոտ
աչքը ձգած արեին՝
սպասում էին
նրա վերջին
բաղցրահամբոյր բարեին:
էն անհամար
շողերը վառ
արեգնազան արեի՝
չէին ուզում
հըրաժեշտ տալ
ծիլ ու ծաղկին, տերեւին,
Ու պըլպըլան
զարդի նման
էտ շողերը բոցավառ.

փարւել էին
նրանց լանջին,
փայլում էին անդադար:
Փարւել էին
ու ամենքին
բօղը գցած հարս արել՝
դաշտ ու մէրին
հարսնբատուն,
հանդը շքեղ զարդարել:
Կէսօրն անց էր:
Սրեն անցել՝
դէմ էր արել սարերին,
բամու ընկեր
հոփ էր ընկել:
Թռչկոտում էր բարերին:
Հորթ ու մողի
դար ու փոսի
ծաղկուտների մէջ մտած՝
մէկ արածում,
մէկ աչք ածում,
նայում էին պըլըջած:
Նայում էին,
որ տեսնէին,
ո՞վ է եկել Մուսնի մօտ,
ո՞վ է Մուսնին
վիրաւորել
կամ ի՞նչու է նա դարդոտ:

7.

Չէնց էս ժամանակ՝
կաղնու ծառի տակ,

Պետին խոստացած
նամակն էր կարդում:
Մուսին թեք ընկած
ականջ էր դնում:

Նուշին նամա-
կում

էսպէս էր գրում:
«Նամակս հասնի
հորթարած Մուս-
նին,
ի գիւղն Սե-
ֆար,



Ղազարի գաւառ...

«Իմ սիրելի,
իմ աչքի լուս Մուսի ջան,
Նուշին ըլի
քու արեւին, քեզ ղուրբան:
Հէրս դո՛ւ ես,
մէրս դո՛ւ ես, ա՛յ ախպէր,
առանց քեզ իմ
օրն ու կեանքը ի՞նչ կըլէր:
Երեք տարւան
կարօտ կայ իմ սրտումը,
էլ հնց մնամ
էս անծանօթ բաղքումը:
Ա՛խ, Մուսի ջան,
Նուշին քեզ ջան, քեզ մատաղ,
օրն անում եմ
հազար բերան ան ու վան,
թէ հնց ընկայ
ես էս կնկայ ճանկի մէջ,
որ ծեծում է,

անիծում է ինձ անվերջ:

Ամեն յիմար
բանի համար կը տեսնես՝
մազըս փետեց,
միսըս պոկեց գժի պէս:
Գլխիս տւաւ,
տարաւ գցեց ներքնատուն,
սոված-ծարաւ
պահեց մինչև իրիկուն:
Ա՛խ, Մուսի ջան,
Նուշին քեզ ջան, քեզ ղուրբան,
թէ ճար ունես՝
դարդիս արա մի դարման:
Արի, մի կերպ
ինձ ազատի էստեղից,
շուտով մի կերպ
ինձ հեռացրո՛ւ էս տանից:
Հօ՛ չի կարող
իր ցաւն ասի ուրիշին
քեզ միշտ սիրող,
քո հարազատ բոյր Նուշին:»
— Տեսա՞ր, Պետի,
իմ երազը կատարեց,—
ասաւ Մուսին
ու ան քաշեց, արտասւեց.—
— Ա՛խ, ո՛վ գիտի
հնց է տանջւում հիմի նա...
վան, հնց պիտի
էդ ցաւերին դիմանայ:

Երեք-չորս օր
 Մուսին մոլոր
 ման էր գալիս
 գժի պէս,
 ման էր գալիս,
 ու ման գալիս՝
 արցունք թափում
 ջրի պէս:
 Չէր իմանում
 ինչ էր անում,
 հնց էր պահում
 հորթերը,
 ո՞նց էր գալիս,
 հնց էր գնում
 հւր էր մնում
 գիշերը:—
 Մէկը չը կար՝
 մի խորհուրդ տար,
 կամ մի քաղցր
 խօսք ասէր,
 մէկը չը կար՝
 կարեկցաբար
 մեր խեղճ Մուսնին
 փսոսէր:
 էսպէս Մուսին
 մահակն ուսին
 դարձեալ մնաց
 մեն-մենակ,
 իր որբ, անտէր
 քրոջ խաթեր

դարդ էր անում
 շարունակ:

Ու մէկէլ մի օր
 խեղճ Մուսին երբ որ
 շատ ախ ու վախից
 բեղարեց-յոգնեց,
 ինքն իրան դարձաւ
 ու էսպէս ասաւ.—
 —Ախպէր, ի՞նչ անեմ
 թէ հորթարած եմ,
 որ հորթարած եմ՝
 գեղի ճորտ հօ չեմ:
 Նուշիս քաղաքում
 արիւն է թրում,
 էս էստեղ կանգնեմ
 ու հորթեր պահեմ:
 Բաս էլ ախպէրը
 հր օրւայ կըլի,
 բաս քւոր տէրը՝
 ախրը հիվ կըլի:
 Չէ, էգուցւանից
 էլ չէր տեսնի ինձ
 էս գեղի հանդում,
 էս բարուքանդում:

Միւս օրը գիւղում
 հորթերը անտէր

դէսողէն ընկած՝
 բառաչում էին
 ու իրենց ընկեր,
 ամենից սիրւած
 Մուսնին ու շանը
 հա կանչում էին:
 Բայց ուր էր Մուսին,
 մահակը ուսին,
 որ գար հորթերը
 քշէր հանդերը...
 էլ ոչ Մուսի կար,
 ոչ էլ Թոփլան կար...
 Առաւօտը վաղ
 վեր էին կացել,
 երկուսը վաղ-վաղ
 գեղից հեռացել:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

1

Գնում էր Մուսին
 մահակը ուսին,
 Թոփլանը կողքին՝
 կեռ պոչը մէջքին,—
 ճամփէն էր երկար,
 դեռ շատ ճամփա կար...
 Երկու օր անցաւ,—
 տարի էր երկար,
 երկու օր անցաւ,
 գնար ետ չը գար...
 Ու երրորդ օրը՝
 վաղ արշալուսին
 քաղաքը հասան
 Թոփլանն ու Մուսին:
 Երկուսն էլ օտար,
 երկուսն էլ չըտես,
 ծանօթն ո՞վ կըտար,
 որ գար սրբանց տես:
 Արևածագին
 չորս կողմից մէկ էլ
 ըսկսեց ուժգին
 քաղաքն աղմկել:
 Արևը կամաց
 բարձրացաւ երկինք,

ցրտից կարկամած
տաքացաւ գետինը:

Մարդիկ թարմ ուժով
արթնացան քնից
նոր ու նոր յուսով
դուրս եկան տնից:

Հսկեց սուրոցը
գործարանների,
երգն ու շուրջը
տան ծառաների:

Մէկը գնում էր
զամբիւղը ձեռքին,
միւսը գալիս էր
կապոցը կողքին:

Մէկը վազում էր
հացթուխի խանութ,
միւսը գալիս էր
ձեռքին հաւ ու ձուտ:

Մէկը հազարով
գնում էր դանդաղ,
միւսը խօսելով
քայլում էր դոչաղ:

Էսպէս շարւէշար
անցան շատ մարդիկ,
ձեռներին պաշար,
ուսներին գործիք:

Փողոց, հրապարակ
ու արհեստանոց՝
մէկ-մէկուց արագ
ձեռք առան նոր գործ:

Դարբինը էնտեղ
երկաթ էր թակում,

նալբանդը էստեղ
պայտերը ծակում:

Դերձակը նստած
իր կարն էր անում,
հացթուխը կանգնած՝
փռնից հաց հանում...

Հիւսն ու որմնադիր
շէնքերի գլխին՝
ամեն մէկը իր
գործն ունէր ձեռքին:

Էսպէս ամեն տեղ
ու ամեն անկիւն
մարդ էր աշխատում
անհանգիստ, անքուն...

Ու շարւէշարան
կառք, ֆուրգօն, սայլակ,
բերին ու տարան
բեռները արագ:

Եւ մեծ ու պստիկ
տղայ ու աղջիկ՝
դուրս եկան փողոց
գնացին դպրոց:

Էս մեծ քաղաքը
փուլած աղաքը՝
Մուսին չը գիտէր
Նուշին հնց գտնէր...

Մուսին կանգնած,
ապուշ կտրած
հա նայում էր դէս ու դէն,

ինչ որ լսում,
 աչքով տեսնում՝
 հէնց կարծում էր թէ՝
 սուտ են:
 Տխուր, տրտում,
 դարդը սրտում
 աչքին արցունք էր խաղում,
 շունն էլ եկել՝
 ոտներն ընկել
 կըծկրւել էր, դողդողում:
 Մուսին կանգնել,
 վիզը թեքել,
 աչք էր ածում, մտածում.—
 հում տուն մտնի,
 հրտեղ գտնի՝
 իր Նուշիկին սիրասուն:
 էսպէս խեղճը
 աչքը ճամփին
 դեռ կանգնած էր վիզը ծուռ,
 վերջը-վերջը
 նստեց տափին,
 որ դինջանայ մի պուճուր:

4.

—Տօ, էյ սարսաղ,
 մօթալ փափախ,
 էդ հրտեղ ես մէկնըլել,—
 հրեց նրան
 մի դռնապան,—
 —Վեր կաց,—ասաւ,— վեր
 կաց, վեր...

Մուսին վախից՝
 թռաւ տեղից,
 իրան զցեց մայթից ցած,
 —Հաւ, բիծի ջան,
 հրէս կերթամ,—
 ասաւ նրան դալկացած:
 —Իրան մտիկ,
 ջանը մտիկ,
 մտիկ ձեռի կոպալին,



աղա՛, հով ես,
 հր գեղիցն ես,
 հուր ես եկել էդ հալին:

ինչ որ լսում,
 աչքով տեսնում՝
 հէնց կարծում էր թէ՛
 սուտ են:
 Տխուր, տրտում,
 դարդը սրտում
 աչքին արցունք էր խաղում,
 շունն էլ եկել՝
 ոտներն ընկել
 կըծկրւել էր, դողդողում:
 Մուսին կանգնել,
 վիզը թեքել,
 աչք էր ածում, մտածում.—
 հում տուն մտնի,
 հրտեղ գտնի՝
 իր նուշիկին սիրասուն:
 էսպէս խեղճը
 աչքը ճամփին
 դեռ կանգնած էր վիզը ծռու,
 վերջը-վերջը
 նստեց տափին,
 որ դինջանայ մի պուճուր:

4.

—Տօ, էյ սարսաղ,
 մօթալ փափախ,
 էդ հրտեղ ես մէկնըւել,—
 հրեց նրան
 մի դռնապան,—
 —Վեր կաց,—ասաւ,—վեր
 կաց, վեր...

Մուսին վախից՝
 թռաւ տեղից,
 իրան գցեց մայթից ցած,
 —Լաւ, բիճի ջան,
 հրէս կերթամ,—
 ասաւ նրան դալկացած:
 —Իրան մտիկ,
 ջանը մտիկ,
 մտիկ ձեռի կոպալին,



աղա, հիվ ես,
 հր գեղիցն ես,
 հւր ես եկել էդ հալին:

— Ես եմ, բիձի,
 Ղազարեցի,
 մի որբ, անտէր հորթարած,
 ունեմ-չունեմ
 մի բուր ունեմ
 խալիխ տանը ճորտ դառած:
 Երեք տարի
 հացափորի
 ծառայում է էս քաղքում,
 ինչ որ մի ծեր,
 մի կուլասէր
 պառաւ կնկայ օջախում:
 Ոչ տուն գիտեմ,
 ոչ տեղ գիտեմ,
 չեմ ճանաչում էտ կնկան,
 անունն ասին...
 հա՛, Հոռոմսիմ,
 Նուշի կասեն աղջկան...
 Եկել եմ որ՝
 ես իմ քուր
 տեղը գտնեմ, տուն տանեմ,
 խալիխ ծեծից
 ու անէծքից
 ազատ պահեմ, պահպանեմ:
 Ասաւ-չասաւ՝
 մին էլ տեսաւ
 դողոցն ընկաւ, դողթողաց,
 ուլանք-ուլանք
 աղի արցունք
 աչքերիցը ցած սողաց:
 Շունն էլ եկաւ
 ոտներն ընկաւ,

կըլանչում էր վախեցած:
 Մուսնի լացը,
 լացն ու կոծը,
 դռնապանը որ տեսաւ,
 գուլթը շարժեց
 սիրտը լցւեց,
 խղճաց նրան ու ասաւ.
 — Եկ, այ որդի,
 գնանք մեր տուն,
 քիչ կը խօսենք միասին,
 էդ բու քուր
 տեղը էս օր
 գտնելն ըլի իմ վզին:

5

Թէյ էր խմում
 Մուսին նստած
 դռնապանի
 սենեակում,
 մէկ-մէկ
 պատմում
 ինչ էր գրած
 իր քոյր Նուշ-
 նի
 նամակում:
 Ամեն մի
 խօսք



ասելիս նա՝
 ախ էր քաշում,
 հեկեկում:
 Ամեն մի խօսք

լսելիս նա՝
սիրտ էր մաշուում,
վիզ թեքում:
Հսեց, լսեց
դռնապանը,
պատասխանեց
վշտալի. —

— Էհ, այ որդի,
այ որբ, անտէր,
խնչ ասեմ, որ՝
լաւ ըլի...

Ոնց որ ասիր,
ասածիդ պէս՝
ճանաչում եմ
մի կնկայ,
հէնց նա կըլի,
շանց կըտամ քեզ՝
մեր փողոցից
ցած կըգայ:

Ես էտ կնկան
շուտ կը գտնեմ,
բազար կը գայ
ամեն օր,

հետը մի խեղճ,
մի թխադէմ
աղջիկ էլ կայ
փոքրաւոր:

Էդ աղջկայ
ոչ գլխին կայ,
ոչ վրեն կայ
կարգին շոր,
անխիղճները
բանեցնում են

մշակի պէս
ամեն օր:

Էդ կնիկը
պարկը լիբը
պաշար կառնի
տան համար,

ու բազարից
էդ աղջկայ
ձեռքը կըտայ,
թէ՝ տուն տար:

Վե՛ր կաց, որդի,
գնանք, տեսնենք,
լաւութիւն է
քեզ կանեմ,
թէ որ ճամփին
չը պատահենք,
մինչև բազար
կը տանեմ:

6

Գնում էր Մուսին
դռնապանի հետ
աներկիւղ, անվախ,
թոփլանն երկուսին
նայում էր խէթ-խէթ,
հետևում դանդաղ...

Ասես թէ նա էլ
բան էր հասկացել
խեղճ Նուշնի մասին,
ու գիտէր նայել,
լսել աչք ածել

Թէ էն ի՞նչ ասեն:
 Որ հասան բազար՝
 իրենց ուղածին
 էն հարիւր-հազար
 մարդկանց արանքում
 երկար փնտրեցին,
 դէսուդէն ընկան,
 երկար ման եկան,
 ոչ կնկան գտան,
 ոչ էլ աղջկան:
 Դռնապանն ասաւ.—
 —Էհ, փառս չըկայ,
 էս օր թո՛ղ մնա,
 էգուց առաւօտ
 կը գտնենք նրանց
 հէնց մեր դռան մօտ:
 էս օր, այ որդի,
 դու իմ դռնադն ես,
 եկ գնանք մեր տուն,
 տունս քեզ փեշքէշ:
 Նս էլ զարիբ եմ,
 գեղըցի քեզ պէս:

7

Մի ամբողջ օր
 Մուսին մօլոր
 դռնապանի դռներին՝
 ման էր գալիս
 ու ման գալիս
 մտածում էր վշտազին:
 Բակը լիբը

երեխէքը
 հաւաքւեցին Մուսնի մօտ,
 որ իմանան
 թէ էդ տղան՝
 ի՞նչ տղայ է անծանօթ:
 Մութը մթնեց
 ու մեր Մուսին
 դռնապանի սենեակում
 մի տեղ պառկել,
 կուչ էր եկել,
 բայց չէր գալիս աչքին քուն:
 Կէս գիշերին,
 մէջ գիշերին,
 Մուսնին կէս քուն, կէս ար-
 թուն,
 էնպէս թւաց՝
 հանդում նստած
 իր շւին է նւագում:
 Հորթ ու մողի
 դար ու փոսի
 ծաղիկներն են արածում,
 բոյրն էլ եկել
 ճաշ է բերել՝
 հացէ, պանիր ու մածոն:
 Ու երկուսով
 մտան մի դով
 շւաքի տակ նստեցին,
 էնպէս հանդարտ,
 էնպէս անդարդ,
 մի ամանից ճաշեցին:
 Քաջ Թոփլանն էլ
 պոչը մեկնել,

կըկըզել է մի փոսուժ,
 աչքը չռած,
 բերանը բաց
 պատառի է ըսպասուժ:
 էն էլ տեսաւ՝
 ինչպէս հասաւ
 դռնապանը անծանօթ,
 թևից բռնեց,
 դէնը հրեց,
 երբ նստել էր դռան մօտ:
 էսպէս կէսըուն
 ու կէս արթուն
 դեռ նա երկար չը քնեց,
 երբ որ յոգնեց՝
 աչքը խփեց,
 դէմքը ծածկեց ու քնեց:

8

Վաղ առաւօտեան
 դռնապանն իր տան
 փողոցն էր մաքրում,
 Մուսին էլ կանգնած
 փողոցի դիմաց
 նայում էր հեռուն:
 Նա իրան էս օր
 ուրախ էր ըզգում,
 ուրախ, ապահով...
 էս օր մի ինչ որ
 աշխոյժ կար հոգում
 գիշերւան տեսած
 ուրախ երագով:

Դռնապանն ասաւ. —
 — Որդի, այ Մուսի,
 բիշ էլ ըսպասի,
 էս է ցած կրգան,
 թէ աչքովդ ընկան՝
 ճանչցար կնկան
 ու էն աղջկան, —
 ձեռաց կը վազես,
 ետնեն կը հասնես,
 ճամփէն կը կտրես:
 Հէնց էս միջոցին
 փողոցի ծայրին
 երևաց մի կին,
 մի աղջիկ կողքին:
 Մուսին որ տեսաւ
 իր մտքումն ասաւ. —
 «Ձան, Նուշնիս գտայ,
 հէնց նա է, որ կայ...»
 Ասաւ... ու հասաւ.
 նայեց էն կնկան,
 նայեց աղջկան,
 տեսաւ իր դիմաց
 իր քոյրն է կանգնած. —
 իր քոյրն է կանգնած՝
 հալած ու մաշած...
 էն ալ-վառ Նուշին,
 էն դառ-վառ Նուշին...
 Մի սառսուռ ընկաւ
 Մուսնի սրտի մէջ,
 մի մոմուռ ընկաւ
 սրտի մէջ անշէջ...
 Աչքերը մթնեց,

ծուռնկը դողդողաց,
էլ չը համբերեց,
գրկեց ու ճշաց.—



—Դ՞ուք էս, Նուշի ջան,
իմ ազիզ քուր ջան...
Վայ իմ Նուշիկն է,
կարմրաթուռիկն է...
Աղջիկը հէնց որ
իւր ազիզ եղբոր
ձայնը իմացաւ,
վզովը ընկաւ
ու ասաւ նրան.—

—Ջան, այ ախպէր ջան,
իմ հէրն ու մէր ջան...

Դու էս իմ Մուսին,
ջան քու նամուսին...
Ջան, այ անուշ ջան,
իմ աչքի լուս ջան,
էդ երբ ես եկել,
ինձ հնց ես գտել...
Դէ որ եկել ես,
ինձ էլ կըտանես...
ինձ էլ կըտանես
քու քիւրը կանես...
էն կինը միաց
իւր տեղը կանգնած,
մի բառ չէր գտնոււմ,
որ ասի Մուսնին,
հնար չէր գտնոււմ,
որ սաստի Նուշին:
Հէնց էս զրուցին,
էս մըխկտոցին,
դռնապանն հասաւ,
մօտեցաւ, ասաւ.—
—Այ որդի, Մուսի,
էս է, խժ գտար...
էլ շատ մի խօսի,
Նուշնիդ մեր տուն տար:
էս մեր խանութը
գիտի մեր տունը,
թէ խօսք կունենայ
ինձ կանչել կըտայ,—
թէ չի ունենայ,
է, փառս չըկայ,
կերթանք ես ու դու
սրա մօտ ճաշին,

որ քեզ ծախսելու
ճամփի փող բախշի:

Կինը չիմացաւ
թէ ի՞նչ կատարւեց,
մէկ էլ էն տեսաւ՝
Նուշին բաժանւեց
ու իսկոյն և ետ
գնաց եղբօր հետ:

Գնաց ու գնաց...
Իսկ ինքը մնաց
փողոցի միջին
առանց աղախին:

Երկար ձայն տւեց,
աղջկան կանչեց,
բայց ո՞վ էր յիմար
որ նորից ետ գար:

9

Մուսին ու էն
դռնապանը
ճաշին եկան կնոջ մօտ,
եկան ասեն,
որ Նուշիկին
գեղն են տանում առաւօտ:
— Չէ, չէ, խանում,
զուր չաբանում,
նեղանում ես նրանից,
իմ քուր Նուշին,—
ասաւ Մուսին,—
շնորհակալ է էս տանից...
Ես եմ տանում,

ես, այ խանում,
կրկնեց Մուսին անհամբեր,
էլ չեմ ուզում,
որ Թիֆլիզում
մենակ ապրի անախպէր...
Չեմ ուզում որ
նա հացափոր
էստէղ մնայ դռնէդուռ,
օրէս դէնը
խալխի տանը
չեմ թողնի ես էդ չափ քուր...
— Ի՞նչ ես ասում,
ի՞նչ ես խօսում,—
կինը տւաւ պատասխան,—
— Բաս ամօթ չէ՞,
միտքդ ի՞նչ է,
մի տես, մի տես, դու սրան:
էն որ ոչլոտ,
ցեխոտ, տլոտ
բաղաք բերի, էն լաւ է՞ր...
էն ժամանակ

ԴՆ գլխին կայ,
 ԴՆ վրէն կայ կարգին շոր,
 երեք տարի
 էն նաչարի
 մաղն ես փետել ամեն օր:
 Գնանք, Մուսի,
 էլ մի խօսի,
 խօսելուց ի՞նչ դուս կըգայ,
 ուր կուղես տար
 քու քուրը,
 ես էստեղ եմ քեզ վկայ:



Նորից հանդերը
 ձէն ու ձուն ընկան,
 նորից հորթերը
 արօտի եկան:
 Նորից մեր Մուսին
 մահակը ուսին,
 հորթերը քշում՝
 ծաղկուտն էր անում,
 ինքը թեք ընկնում
 ու հանգստանում:
 Քոյրն էլ երբեմն
 եղբոր մօտ դնում,
 պաշար էր տանում
 ու կողքին նստում...
 Ու էնպէս հանդարտ,
 ու էնպէս անդարդ
 համ մի ամանից
 հաց էին ուտում,
 համ մի ամանից
 ջուր էին խմում...
 Թոփլանն էլ գալիս,
 մտիկ էր տալիս,
 որ իրան խղճան
 մի պատառ հաց տան:
 Նրբ հաց էր ուտում,
 Մուսին կշտանում,
 մէկ տաղ էր ասում,
 մէկ շըւի ածում, —
 — Դ՛հ, հա՛ դ՛հ,
 դր՛ի դ՛հ, հա՛ դ՛հ,
 հաղրի դ՛հ, հա՛ դ՛հ

դուզրի դժւ, հա դժւ...
Դաշտերն ու մէրին
Մուսնի նւագած
բոլոր երգերին՝
ձէն էին պահում
ու սիրտը շահում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0396013

6378